

## ՏԱՐԵՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ  
2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

- ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:  
2. 2020-20201ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:  
3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:  
4. Ընթացիկ հարցեր:
- ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:  
2. Մագիստրոսական ատենախոսությունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատում:  
3. Ընթացիկ հարցեր:
- ՈՒԿՏԵՄԲԵՐ - 1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մասնագիտական/:  
2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:  
3. Ընթացիկ հարցեր:
- ՆՈՅԵՄԲԵՐ - 1. Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվություն:  
2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:  
3. Ընթացիկ հարցեր:
- ԴԵԿՏԵՄԲԵՐ - 1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստում:  
2. Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստում:  
3. Ընթացիկ հարցեր:
- ՎԵՐԵՍԻՆ - 1. Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում:  
2. Առկա 3-րդ կուրսի մանկավարժական և առկա 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկաների նախապատրաստում:  
3. Հեռակա ուսուցման մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:  
4. Ընթացիկ հարցեր:
- ՓԵՏՐՎԱՐ - 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:  
2. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:  
3. Հեռակա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մեթոդիկա/:  
4. Ընթացիկ հարցեր:
- ՄԱՐՏ - 1. Առկա բակալավրիատի 3-րդ կուրսի և հառակա 4-րդ, 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:  
2. 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվություն:  
3. Մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում:  
4. Ընթացիկ հարցեր:
- ԱՊՐԻԼ - 1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:  
2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:  
3. Ընթացիկ հարցեր:
- ՄԱՅԻՍ - 1. Ամառային քննաշրջանի նախապատրաստում:  
2. Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման, մագիստրատուրա /մագիստրոսական ատենախոսությունների

պաշտպանության/ արդյունքների ամփոփում:

3. Ընթացիկ հարցեր:

- ՀՈՒՆԻՍ - 1. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ  
ատեստավորման արդյունքների ամփոփում:  
2. Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների  
ամփոփում:  
3. Առարկաների ուսումնամեթոդական փաթեթների վերանայում:  
4. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:  
5. Ընթացիկ հարցեր:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2019-2020 ուս.տարվա անդրանիկ նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը:

- ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:  
2. 2019-2020 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:  
3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:  
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը ներկայացրեց ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

- ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:  
2. 2019-2020 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:  
3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:  
4. Ընթացիկ հարցեր:

- ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:  
2. Մագիստրոսական ատենախոսությունների թեմաների և նրանց  
ղեկավարների հաստատում:  
3. Ընթացիկ հարցեր:

- ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների  
հաստատում /մասնագիտական/:  
2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:  
3. Ընթացիկ հարցեր:

- ՆՈՅԵՄԲԵՐ - 1. Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական  
աշխատանքների հաշվետվություն:  
2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի  
ղեկավարի հաշվետվություն:  
3. Ընթացիկ հարցեր:

- ԴԵԿՏԵՄԲԵՐ - 1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստում:  
2. Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստում:  
3. Ընթացիկ հարցեր:

- ՀՈՒՆՎԱՐ - 1. Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

2. Առկա 3-րդ կուրսի մանկավարժական և առկա 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկաների նախապատրաստում:
3. Հեռակա ուսուցման մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:
4. Ընթացիկ հարցեր:

- ՓԵՏՐՎԱՐ -
1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
  2. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:
  3. Հեռակա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մեթոդիկա/:
  4. Ընթացիկ հարցեր:

- ՄԱՐՏ -
1. Առկա բակալավրիատի 3-րդ կուրսի և հառակա 4-րդ, 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:
  2. 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվություն:
  3. Մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում:
  4. Ընթացիկ հարցեր:

- ԱՊՐԻԼ -
1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:
  2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:
  3. Ընթացիկ հարցեր:

- ՄԱՅԻՍ -
1. Ամառային քննաշրջանի նախապատրաստում:
  2. Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման, մագիստրատուրա /մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության/ արդյունքների ամփոփում:
  3. Ընթացիկ հարցեր:

- ՀՈՒՆԻՍ -
1. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:
  2. Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
  3. Առարկաների ուսումնամեթոդական փաթեթների վերանայում:
  4. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
  5. Ընթացիկ հարցեր:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2018-2019 ուս. տարվա տարեկան աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - 2018-2019 ուս. տարվա ծավալ-ձանրաբեռնվածության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը նշեց, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի <<Երաժշտության մանկավարժության>> ամբիոնի 2019-2020 ուստարում ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 31000 ժամ:

Այլ ամբիոններին փոխանցված ժամաքանակ – 1075 ժամ

Ժամավճար – 236 ժամ:

Թափուր է մնացել 3501 ժամ:

Արդյունքում գոյացած 26188 ժամը բաշխվել է ամբիոնի ներքոհիշյալ դասախոսների միջև հետևյալ կերպ.

1.Էլբակյան Սարգիս Էդուարդի – մ.գ.թ., պրոֆ.պ, ամբիոնի վարիչ	1.0 դր.	/729ժ/
2. Հարությունյան Աննա Պետրոսի - ա.գ.թ., դոցենտ	1.00դր.	/843ժ/
3. Բաղդասարյան Մարգարիտա Էդուարդի – դոցենտ	1.00 դր.	/ 849ժ/
4.Մելիքսեթյան Գոհար Բեժանի – մ.գ.թ., դոցենտ	1.00 դր.	/845ժ/
5.Եղիզարյան Վյաչեսլավ Արշավիրի - ա.գ.թ., դոցենտ	1.0 դր.	/842ժ/
6. Ադամյան Աննա Ժորիկի – ա.գ.թ.,դոցենտ	1.00 դր.	/845ժ/
7.Մադոյան Նաիրա Հրանտի – դասախոս	1.00 դր.	/974ժ/
8. Ալավերդյան Տիգրան Գարիկի – պրոֆեսոր	1.00 դր.	/726ժ/
9. Խաչատրյան Լիլիկ Գուրգենի – դոցենտ	1.00 դր.	/845ժ/
10. Ավետիսյան Յուրի Արտյոմի – դոցենտ	0.25 դր.	/214ժ/
11. Պողոսյան Նունե Էդիկի – պրոֆեսոր	0.5 դր.	/365ժ/
12. Թադևոսյան Շաքե Սուրենի – դոցենտ	1.00 դր.	/848ժ/
13. Ավետիսյան Ֆլորա Յուրիկի – ասիստենտ	1.00 դր.	/976ժ/
14. Դադոյան Ելենա Թելմանի – դասախոս	1.00 դր.	/976ժ/
15. Կոստանյան Արուսյակ Համազասպի – դասա	0.5 դր.	/486ժ/
16. Շահումյան Սուրեն Սուրենի – դոցենտ	0.5 դր.	/425ժ/
17. Կարապետյան Մերի Համլետի - դասախոս	1.00դր.	/981ժ /
18. Բաբուրյան Արտաշես Ռոբերտի - դոցենտ	1.00 դր.	/847ժ/
19. Յուզբաշյան Յուրիկ Վաղարշակի - մ.գ. դոկտոր, պրոֆեսոր	1.00 դր.	/730ժ/
20. Դանիելյան Էդուարդ Մուշեղի – պրոֆեսոր	0.75 դր.	/556ժ/
21. Գասպարյան Անահիտ Սաշայի - դոցենտ	1.00 դր.	/855ժ/
22. Պետրոսյան Սուսաննա Էդվարդի - ասիստենտ	1.00 դր.	/984ժ/
23. Հակոբովա Ռիմմա Սերգեյի - դոցենտ	0.75 դր.	/637ժ/
24. Մաթևոսյան Շուշանիկ Ռուդոլֆի - ասիստենտ	1.00 դր.	/975ժ/
25. Սիմոնյան Մարիա Արամի - ասիստենտ	1.00 դր.	/973ժ/
26. Մարգարյան Նաիրա Արթուրի - ասիստենտ	1.00 դր.	/975ժ/
27. Ավետիսյան Մարիաննա Ռուլանդի - դասախոս	1.00 դր.	/985ժ/
28. Օջախյան Արմինե Օնիկի - ասիստենտ	1.00 դր.	/988ժ/
29. Խաչատրյան Արաքսյա Արտավազդի - դասախոս	1.00 դր.	/976ժ/
30. Սայադյան Զարուհի Խաչիկի - դասախոս	0.75 դր.	/730ժ/
31. Սիմոնյան Աննա Աշոտի – դասախոս	0.75 դր.	/744ժ/
32. Հակոբյան Արմինե Աշոտի – ա.գ.թ., դասախոս	1.00 դր.	/977ժ/
33. Խաչիկյան Քրիստինե Սերգեյի – դասախոս	0.5 դր.	/487ժ/

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2018-2019 ուստարվա ծավալ-ծանրաբեռնվածությունը:

ԼՍԵՑԻՆ – Առկա 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, պրակտիկայի ղեկավար Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրեց, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի 2019-2020ուս. տարվա երաժշտական կրթություն մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի ուսանողների ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպվում է 2019 թ. սեպտեմբերի 10-ից դեկտեմբերի 17-ը (շաբաթական մեկ օրով): Կուրսը բաղկացած է 12 ուսանողներից, բաժանվել է երկու խմբի, առաջին խումբը՝ Ս.Շահումյանի անվ. թիվ 1 հիմն.դպրոց, մեթոդիստ-ղեկավար Սուսաննա Պետրոսյան, երկրորդ խումբը՝ Խ. Աբովյանի անվ. թիվ 2 հիմն.դպրոց, մեթոդիստ-ղեկավար Նաիրա Մարգարյան:

4-րդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2019 թ. սեպտեմբերի 9-ից հոկտեմբերի 18-ը: Կուրսը բաղկացած է 26 ուսանողներից, բաժանվել է երկու խմբի, առաջին խումբը՝ Խ. Աբովյանի անվ. թիվ 2 հիմն. դպրոց, մեթոդիստ-ղեկավար Նաիրա Մարգարյան /12 ուսանող/, երկրորդ խումբը՝ ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմն. դպրոց, մեթոդիստ-ղեկավար Ելենա Դադոյան /14 ուսանող/:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկա 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ** – 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի ամբիոնի կողմից էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության մշտադիտարկման կարգի, ցուցիչների և ուսումնամեթոդական փաթեթների հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Սարգիս Էլբակյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի ամբիոնի կողմից էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության մշտադիտարկման կարգը և ցուցիչները.

Հ/Հ	ՑՈՒՑԻՉ	ՑՈՒՑԻՉԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ
<b>Կիսամյակի ուսումնական I-ին ամիս</b>		
1.1	Առարկայական նկարագրի առկայություն՝ յուրաքանչյուր դասընթացում ստորև նշված բոլոր կետերի առկայությամբ. <ol style="list-style-type: none"> <li>1. Առարկայի համառոտ բովանդակություն</li> <li>2. Առարկայի կրթական վերջնարդյունքներ</li> <li>3. Առարկայի գնահատման մեթոդներ և չափանիշներ՝ ներառյալ էլ. հանձնարարությունների մասնաբաժինը /տեսական դասընթացներ/</li> <li>4. Հիմնական և լրացուցիչ գրականության ցանկ</li> </ol>	10%
1.2	Թեմատիկ տրոհման առկայություն	30%
1.3	1-4 ուսումնական շաբաթների ուսումնական նյութի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման	30%
1.4	Շաբաթական ակտիվություն, շաբաթական մեկ անգամ /տեսական դասընթացներ/յուրաքանչյուր դասընթացում ստորև նշված կետերից որևէ մեկի առկայությունը /անհատական դասերի դեպքում ամիսը 1 անգամ. <ol style="list-style-type: none"> <li>1. Յուրաքանչյուր դասին /անհրաժեշտ ուսումնական / թեմատիկ նյութի տեղադրում, կամ</li> <li>2. Լրացուցիչ ուսումնական էլ. նյութեր/Sites, Video, Links և այլն/ կամ</li> <li>3. Գնահատվող էլեկտրոնային հանձնարարություններ /տես. 4.3 կետ/</li> </ol>	30%
<b>Կիսամյակի ուսումնական II-րդ ամիս</b>		
2.1	Համապատասխան ուսանողների առկայություն յուրաքանչյուր	

	դասընթացում	10%
2.2	I միջանկյալ ստուգման հարցաշարի առկայություն	10%
2.3	5-8 ուսումնական շաբաթների ուսումնական նյութի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման	40%
2.4	Շաբաթական ակտիվություն, շաբաթական մեկ անգամ /տեսական դասընթացներ/յուրաքանչյուր դասընթացում ստորև նշված կետերից որևէ մեկի առկայությունը /անհատական դասերի դեպքում ամիսը 1 անգամ. 1. Յուրաքանչյուր դասին /անհրաժեշտ ուսումնական / թեմատիկ նյութի տեղադրում, կամ 2. Լրացուցիչ ուսումնական էլ. նյութեր/Sites, Video, Links և այլն/ կամ 3. Գնահատվող էլեկտրոնային հանձնարարություններ /տես. 4.3 կետ/	40%
<b>Կիսամյակի ուսումնական III-րդ ամիս</b>		
3.1	Համապատասխան ուսանողների առկայություն յուրաքանչյուր դասընթացում	10%
3.2	II միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարի առկայություն	10%
3.3	9-12 ուսումնական շաբաթների ուսումնական նյութի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման	40%
3.4	Շաբաթական ակտիվություն, շաբաթական մեկ անգամ /տեսական դասընթացներ/յուրաքանչյուր դասընթացում ստորև նշված կետերից որևէ մեկի առկայությունը /անհատական դասերի դեպքում ամիսը 1 անգամ. 1. Յուրաքանչյուր դասին /անհրաժեշտ ուսումնական / թեմատիկ նյութի տեղադրում, կամ 2. Լրացուցիչ ուսումնական էլ. նյութեր/Sites, Video, Links և այլն/ կամ 3. Գնահատվող էլեկտրոնային հանձնարարություններ /տես. 4.3 կետ/	40%
<b>Կիսամյակի ուսումնական IV-րդ ամիս</b>		
4.1	13-16 ուսումնական շաբաթների ուսումնական նյութերի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման	10%
4.2	Շաբաթական ակտիվություն, շաբաթական մեկ անգամ /տեսական դասընթացներ/ յուրաքանչյուր դասընթացում ստորև նշված կետերից որևէ մեկի առկայությունը /անհատական դասերի դեպքում ամիսը 1 անգամ. 1. Յուրաքանչյուր դասին /անհրաժեշտ ուսումնական / թեմատիկ նյութի տեղադրում, կամ 2. Լրացուցիչ ուսումնական էլ. նյութեր/Sites, Video, Links և այլն/ կամ 3. Գնահատվող էլեկտրոնային հանձնարարություններ /տես. 4.3 կետ/	10%
4.3	Գնահատվող էլեկտրոնային հանձնարարությունների տրամադրում ուսանողներին. /տեսական դասընթացներ/ 1. յուրաքանչյուր դասընթացում հանձնարարությունները պետք է տեղադրվեն նվազագույնը 1 շաբաթ վերջնաժամկետով, 2. էլեկտրոնային հանձնարարությունների գնահատումը դասախոսը պետք է իրականացնի հանձնարարության վերջնաժամկետից հետո 1 շաբաթվա ընթացքում, 3. յուրաքանչյուր հանձնարարության տրամադրումը պետք է լինի նախորդ հանձնարարության գնահատականները ուսանողներին տրամադրելուց հետո նվազագույնը 2 շաբաթ ընդմիջմամբ,	40%

	<p>4. գնահատվող էլեկտրոնային հանձնարարությունները պետք է տեղադրվեն դասախոսի կողմից կիսամյակում նվազագույնը 1 անգամ, առավելագույնը՝ 2, ըստ դաշնաթացի յուրահատկության,</p> <p>5. էլեկտրոնային գնահատվող հանձնարարությունները կարող են փոխակերպվել դասախոսի կողմից առանցքային թեմաներին վերաբերող հեղինակային տեսագրություններ կամ լուսանկարների տրամադրմամբ:</p>	
4.4	Google for Education հավելվածի լրացուցիչ հնարավորությունների կիրառում /Sites /Web conferanses/Video Content/	40%

Ելնելով <<Երաժշտական կրթություն>> մասնագիտության առանձնահատկություններից անհատական դասընթացների դեպքում՝ նվազարան, խմբավարություն, ծայնադրում, նվագակցության դասարան, կիսամյակի ընթացքում անցկացնել 1-ընթացիկ ստուգում, որը կարտացոլվի թեմատիկ տրոհման մեջ և կիրականացվի առերես: Իսկ տեսական դասընթացների դեպքում նույնպես 1-ընթացիկ ստուգում՝ էլեկտրոնային հարթակում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել Երաժշտության մանկավարժության ամբիոնի կողմից էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության մշտադիտարկման կարգը, ցուցիչները և ուսումնամեթոդական փաթեթները:

Նիստի նախագահ՝  
Քարտուղար՝

Ս.Էլբակյան  
Ա.Կարապետյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական կազմը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:  
2. Մագիստրոսական ատենախոսությունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատում:  
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ՝ Աննա Հարությունյանը ներկայացրեց տեսական առարկաների 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի բաց դռների և դասալսումների գրաֆիկը: Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, ասիստենտ՝ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց խմբավարություն և ծայնադրում առարկաների բաց դռների և դասալսումների

գրաֆիկը, իսկ ա.գ.թ., դոցենտ Վ.Եդիգարյանը՝ նվագարան առարկայի բաց դռների և դասալսումների գրաֆիկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի բաց դռների և դասալսումների գրաֆիկները:

ԼՍԵՑԻՆ – Մագիստրոսական ատենախոսությունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ՝ Ս.Էլբակյանը ներկայացրեց մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին:

	Մագիստրոս	Թեմա	Գիտական ղեկավար
1	Հովհաննիսյան Լիաննա	Սոֆի Ազնաուրյանի «Չիկարելիի արկածները» մանկական օպերան հիմնական դպրոցի 5-րդ դասարանում	դոցենտ՝ Մ.Բաղդասարյան
2	Ավդալյան Անի	«Բազմաձայն երգեցողության զարգացումը» մանկավարժական պրակտիկայի ընթացքում (5-7-րդ դասարաններ)	մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան
3	Թադևոսյան Եսթեր	Էդվարդ Միրզոյանի «Մանկական ալբոմը» հիմնական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասերին	ա.գ.թ., դոցենտ՝ Ա.Հարությունյան
4	Ալեքսանդրյան Հայկ	Աշակերտների բազմակողմ երաժշտական զարգացումը հիմնական դպրոցի 5-րդ դասարանում	մ.գ.դ., պրոֆեսոր՝ Յու.Յուզբաշյան
5	Մեխակյան Էդմոն	Երգչական ծայնի զարգացման առանձնահատկությունները «Երաժշտություն» առարկայի դասին	մ.գ.դ., պրոֆեսոր՝ Յու.Յուզբաշյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ – Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 2018-2019 ուստարում մագիստրոսական ատենախոսությունը չպաշտպանած Տաթևիկ Պողոսյանի մագիստրոսական ատենախոսության թեմայի և ղեկավարի վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ՝ Ս.Էլբակյանը նշեց, որ պրոֆեսոր Հենրի Սիմոնյանի աշխատանքից ազատման պատճառով անհրաժեշտ է նշանակել նոր գիտական ղեկավար և առաջարկեց Յուրի Յուզբաշյանի թեկնածությունը: Նա ներկայացրեց նաև Տաթևիկ Պողոսյանի 2018-2019 ուստարում հաստատված մագիստրոսական ատենախոսության թեման՝ «Սովորողների երգչային ծայնի զարգացումը երաժշտության դասին և դպրոցական երգչախմբի պարապմունքներին» խորագրով, նշելով, որ նպարակահարմար է մագիստրոս Տաթևիկ Պողոսյանի թեման թողնել անփոփոխ: Քանի որ նշված թեմայի ուղղությամբ արդեն կատարված են որոշակի աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Տաթևիկ Պողոսյանի մագիստրոսական ատենախոսության թեման և ղեկավարին:

ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱԿԱՅՏՎԵՑԻՆ – Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը, նշելով, որ ընթացքի մեջ է առկա բակալավրիատ 3-րդ կուրսի /ուսումնաճանաչողական/ և 4-րդ կուրսի /մանկավարժական/ պրակտիկան, որը անցկացվում է Շահումյանի անվան, Խ.Աբովյանի անվան թիվ 2, N 57 հիմնական դպրոցներում, մեթոդիստներ՝ Սուսաննա Պետրոսյանի, Նաիրա Մարգարյանի և Ելենա Դադոյանի ղեկավարությամբ: Պրակտիկաները ընթանում են բնականոն հունով: Ըստ մեթոդիստների ներկայացված տվյալների՝ բացակայություններ չկան:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Սարգիս Էլբակյանը նշեց, որ պատրաստ է նաև պրակտիկայի ընթացքի վերահսկողության գրաֆիկը, որը կիրականացվի ամբիոնի վարիչի /Սարգիս Էլբակյան/, պրակտիկայի ղեկավարի /Շուշանիկ Մաթևոսյան/ և երաժշտության դասավանդման տեսության և մեթոդիկայի դասախոս, մ.գ.դ., պրոֆեսոր՝ Յուրի Յուզբաշյանի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Անահիտ Սամվելի Շիրինյանի «Իգումնովյան դպրոցի մանկավարժական մեթոդները և հայկական կատարողական արվեստը» խորագրով հոդվածի տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱԿԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Ս.Էլբակյանը նշեց, որ Անահիտ Սամվելի Շիրինյանի «Իգումնովյան դպրոցի մանկավարժական մեթոդները և հայկական կատարողական արվեստը» խորագրով հոդվածի վերաբերյալ առկա են գրավոր դրական կարծիքներ տրված մ.գ.թ., դոցենտ Գոհար Մելիքսեթյանի և դոցենտ Լիլիկ Խաչատրյանի կողմից, որտեղ հիմնավորված է աշխատանքի արդիականությունը, պահանջված լինելը: Գրախոսներն աշխատանքը համարում են հաջողված և արժանի տպագրվելու:

ՈՐՈՇԵՑԻՆ – Անահիտ Սամվելի Շիրինյանի «Իգումնովյան դպրոցի մանկավարժական մեթոդները և հայկական կատարողական արվեստը» խորագրով հոդվածը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ – Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ Սոֆի Խաչատուրի Ղազարյանի արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար պաշտպանության ներկայացված «Армянская фортепианная музыка для детей и юношества: трактовка фортепиано и специфика исполнительских задач» խորագրով գիտ. ղեկ.՝ արվեստագիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ի.Լ.Զոլոտովա/ատենախոսության հարցը:

ԱՐՏԱԿԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Ս.Էլբակյանը, մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյանը, ա.գ.թ., դոցենտ՝ Ա. Հարությունյանը, ա.գ.թ., դոցենտ՝ Վյաչեսլավ Եղիզարյանը, ա.գ.թ., դոցենտ՝ Աննա Ադամյանը բարձր գնահատեցին ներկայացված աշխատանքը, նշելով որ Սոֆի Խաչատուրի Ղազարյանի «Армянская фортепианная музыка для детей и юношества: трактовка фортепиано и специфика исполнительских задач» խորագրով ատենախոսությունը

համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուական ատենախոսություններին առաջարկվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Սոֆի Խաչատուրի Ղազարյանի «Армянская фортепианная музыка для детей и юношества: трактовка фортепиано и специфика исполнительских задач» խորագրով ատենախոսությանը տալ դրական կարծիք և երաշխավորել հրապարակային պաշտպանության :

Նիստի նախագահ՝  
Քարտուղար՝

Ս.Էլբակյան  
Ա.Կարապետյան

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019թ. հոկտեմբերի 17-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական կազմը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մասնագիտական/:  
2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:  
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման /մասնագիտական/ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Սարգիս Էլբակյանը ներկայացրեց առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները /մասնագիտական/:

1.Կոմիկական օպերաներ:

2.3.Հայդնի դերը համաշխարհային երաժշտարվեստում:

3.3.Հայդնի Նելսոն մեսսան և «Տարվա եղանակներ» օրատորիան:

4.Վ.Մոցարտի դերը համաշխարհային երաժշտարվեստում:

5 .Լ.Բեթհովենի ստեղծագործական ուղին:

6. Վ. Մոցարտի օպերային ռեֆորմի սկզբունքները:

7.Վ.Մոցարտի buffo օպերաները:

8.Լ.Բեթհովենի հերոսական կերպարները:

9.Լ.Բեթհովենը և ռոմանտիզմը:

10.Ռոմանտիզմը երաժշտության մեջ:

11.Ռոմանտիզմը և Ֆ.Շոպերտի արվեստը:

12. Դասական և ռոմանտիկ միտումների հարաբերակցությունը Ֆ.Շոպերտի ստեղծագործության մեջ:

13.Ն.Պագանինիի վիրտուոզ կատարողական նորարարությունները:

14. Կ.Մ.Վեբերի 'Կախարդական հրաձիգ' օպերայի նորարարությունները:

15.Ֆ.Մենդելսոնի 'Շոտլանդական' և 'Իտալական' սիմֆոնիաները:

16. Ֆ.Մենդելսոնի սիմֆոնիկ երաժշտությունը:

17..Մենդելսոնի դաշնամուրային ստեղծագործությունը:

18.Ֆ.Շոպենի դաշնամուրային կոնցերտների առանձնահատկությունները

19.Բրամսի թ.1սիմֆոնիա և 'Գերմանական ռեքվիեմը':

20.Ռ.Վագների օպերային ռեֆորմի սկզբունքները:

21. Ֆ.Լիստի տրանսցեդենտալ էտյուդներ:

22.Ֆ.Լիստի դաշնամուրային կոնցերտներ:

23.Ռ.Շոմանի ստեղծագործությունը:

24.Հեքիաթային կերպարները Է.Գրիգի ստեղծագործություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները /մասնագիտական/:

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Ս.Էլբակյանը տեղեկացրեց, որ ամբիոնը կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից ստացել է գրություն ASPU Classroom էլեկտրոնային տիրույթում 2019-2020 ուստարվա հեռակային վերաբերվող ընդհանրական մոտեցումները ինչպես նաև հեռակա բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ժամանակացույցը:

Հաշվի առնելով 2018-2019 ուստարում նոր կրթական ծրագրերի հեռակա 1-ին կուրսի ուսումնական գործընթացի իրականացման փորձը Երաժշտության մանկավարժության ամբիոնը գտնում է, որ «Երաժշտական կրթություն» մասնագիտության համար հեռակա ուսուցման գործող համակարգը (Էլեկտրոնային խորհրդատվությունները, էլեկտրոնային միջանկյալ ստուգումները) չեն կարող ապահովել ծրագրով նախատեսված ելքային արդյունքները: Դա վերաբերվում է հատկապես հետևյալ առարկաներին.

- Նվագարան
- Խմբավարություն և խմբերգային դասարան

- Ձայնադրում
- Նվազակցության դասարան
- Սոլֆեջիո և հարմոնիա

Վերոնշյալ առարկաները հիմնականում կրում են ուսուցման անհատական բնույթ և դրանց կազմակերպումը էլեկտրոնային խորհրդատվության և էլեկտրոնային միջանկյալ ստուգման ձևով անընդունելի է:

Ամբիոնը խնդրում է նշված առարկաների էլեկտրոնային խորհրդատվությունները և էլեկտրոնային միջանկյալ ստուգումները թույլ տալ անցկացնել առերես:

## ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը, նշելով, որ ընթացքի մեջ է առկա բակալավրիատ 3-րդ կուրսի /ուսումնաճանաչողական/ պրակտիկան, որը անցկացվում է Շահումյանի անվան և Խ.Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցներում, մեթոդիստներ՝ Սուսաննա Պետրոսյանի և Նաիրա Մարգարյանի ղեկավարությամբ: Կայանում են հանդիպումներ՝ մանկավարժների և հոգեբանների հետ, կազմակերպվում միջոցառումներ և երաժշտական դասամիջոցներ:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ՝ Սուսաննա Պետրոսյանը նշեց, որ կայանալու է միջոցառում /երեքշաբթի՝ 22.10.2019թ. ժամը 13:30-ին /նվիրված Կոմիտասի 150-ամյակին՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դիմաց գտնվող Կոմիտասի արձանի մոտ:

Պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը նշեց նաև, որ վաղը՝ 18.10.2019թ.-ին ավարտվում է 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան, որն անց է կացվել Շահումյանի անվան, Խ.Աբովյանի անվան թիվ 2 և N 57 հիմնական դպրոցներում, մեթոդիստներ՝ Սուսաննա Պետրոսյանի, Նաիրա Մարգարյանի և Ելենա Դադոյանի ղեկավարությամբ: Յուրաքանչյուր ուսանող վարել է 6-դաս: Գոհունակություն են արտահայտել դպրոցի տնօրենները և հայտնել ապագայում համագործակցելու ցանկություն:

Պրակտիկայի ընթացքը Շ. Մաթևոսյանը գնահատեց բավարար, քանի որ այն հսկվել է ամբիոնի կողմից ինչպես նախօրոք ներկայացված վերահսկողության գրաֆիկի համաձայն, այնպես էլ լրացուցիչ:

Շ.Մաթևոսյանը տեղեկացրեց նաև, որ երկուշաբթի օրվանից /21.10.2019թ./ կմեկնարկի առկա ուսուցման մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան 3-շաբաթ ժամանակահատվածով /21.10.19թ.-08.11.19թ./: 9-ը ուսանողից 2-ը՝ պրակտիկան կանցկացնեն ներքոնշյալ դպրոցական կրթական հաստատություններում (որտեղ աշխատում են), իսկ 7-ը Գեղարվեստական կրթության ֆակուլտետի

«Երաժշտական կրթություն» բաժնի առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում:

- Դպրոցներ

1. Եփրեմյան Արուսիկ

Հ.Հ. ք. Երևանի Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 հիմնական դպրոցում, ՊՈԱԿ-ում, որպես երաժշտության ուսուցչուհի:

մեթոդիստ՝ ա.գ.թ., դասախոս Արմինե Հակոբյան

2. Մխիթարյան Հայարփի

Հ.Հ. ք. Երևանի «Հայ-Չինական բարեկամության դպրոցում», հիմնադրամում, որպես երաժշտության ուսուցչուհի:

մեթոդիստ՝ մ.գ.թ., դոցենտ Գոհար Մելիքսեթյան

- Երաժշտական կրթություն» բաժնի ԱԲ- 1-ին և 2-րդ կուրսեր

1. Ադամյան Վիկտորյա

2. Թադևոսյան Լիլիթ

մեթոդիստ՝ մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյան

3. Գրիգորյան Դիաննա

4. Հարությունյան Քրիստինա

մեթոդիստ՝ ա.գ.թ., դոցենտ Աննա Հարությունյան

5. Բադալյան Ստեփան

մեթոդիստ՝ մ.գ.թ., դոցենտ Գոհար Մելիքսեթյան

6. Աբրահամյան Ալինա

մեթոդիստ՝ ա.գ.թ., դասախոս Արմինե Հակոբյան

7. Ալեքսանյան Քրիստինե

մեթոդիստ՝ դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան

Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Սարգիս Էլբակյանը նշեց, որ կիրականացվում է պրակտիկայի ընթացքի վերահսկողությունը, ամբիոնի վարիչ՝ Սարգիս Էլբակյանի, պրակտիկայի ղեկավար Շուշանիկ Մաթևոսյանի և երաժշտության դասավանդման տեսության և մեթոդիկայի դասախոս, մ.գ.դ., պրոֆեսոր՝ Յուրի Յուզբաշյանի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

Նիստի նախագահ՝  
Քարտուղար՝

Ս.Էլբակյան  
Ա.Կարապետյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2019թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական կազմը:

- ՕՐԱԿԱՐԳ – 1. Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվություն:  
 2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:  
 3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ՝ Աննա Հարությունյանը ներկայացրեց, որ 2019թ.-ին Երաժշտության մանկավարժության ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի 20 դասախոս զբաղվել է գիտական գործունեությանը՝ գրելով 23 գիտական հոդված, որոնցից մի քանիսը գտնվում են տպագրական փուլում, 1-ուսումնական ձեռնարկ նախատեսված երաժիշտ-խմբավարների համար: Վերահրատարակվել է հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի 3-րդ դասարանի դասագիրքը, հեղինակներ՝ Ալինա Փահլևանյան, Յուրի Յուզբաշյան: Հոդվածներից շատերը տպագրված են արտասահմանյան ամսագրերում՝ այդ թվում Պենզա, Կազան և այլն:

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Օավալ
Գոհար Մելիքսեթյան	О некоторых особенностях музыкального языка полифонических сочинений Арама Хачатуряна	
Գոհար Մելիքսեթյան	Метод обучения многоголосному пению на уроках музыки	
Գոհար Մելիքսեթյան	О преподавании полифонии бакалавриате	
Ս.Էլբակյան, Ա.Հարությունյան	E.Mirzoyan: String Quartet	4 էջ
Ս.Էլբակյան, Ա.Հարությունյան	Peculiarities of Arno Babajanyan's music style ( Starting from the "Six pictures for the piano" series to "Folk")	7էջ
Աննա Հարությունյան	Հովհաննես Չեքիջյանի հյուրախաղերը Լեհաստանում, Հովհաննես Չեքիջյան-90:	
Մարգարիտա Բաղդասարյան	Юные музыканты на фестивале в Бургосе	
Մարգարիտա Բաղդասարյան	Հաջողության գումարեղիններ	
Արուսյակ Կոստանյան	Արամ Սաթյանի «Լիլիթ» փոփ-օպերան	8էջ
Ելենա Դադոյան	«Музыкальное образование как средство всестороннего развития личности в XXI веке»	4 էջ
Ելենա Դադոյան	«Взаимосвязь культуры и образования в современном мире.»	4 էջ
Պետրոսյան Սուսաննա, Միմոնյան Մարիա	Романос Меликян	7էջ
Ռիմմա Հակոբովա	«Impact of Music on Formation of identity of Schoolers at Puberty Age»	
Արտաշես Բաբուրյան	Հայ ազգային բազմաձայնության ծնունդը	11էջ

Նաիրա Մարգարյան	лаготворное влияние музыки на детей с ОВЗ в процессе обучения в образовательной системе	4 էջ
Ա.Ա.Սիմոնյան, Ա.Ռ.Մուրադյան	Քուլչինգի դրսևորման հոգեբանամանկավարժական ասպեկտները	
Աննա Ադամյան	Тезис "Sight reading as a factor in the professional growth of future music teacher"	
Շաքե Թադևոսյան	Ռուս դաշնամուրային դպրոցի դերը հայ կատարողական արվեստի զարգացման մեջ	
Ալավերդյան Տիգրան	О русском романсе	
Ֆլորա Ավետիսյան	Важность раннего музыкального обучения детей	5 էջ
Նաիրա Մարտյան Աննա Մաստրյան	Հովհաննես Չեքիջյանի և հայկական կապելլայի Լենինգրադյան հյուրախաղերը. Լենինգրադում մաեստրոյի առաջին հյուրախաղերի 55-ամյակի առթիվ	
Խաչատրյան Արաքսյա	Խմբերգային պարտիտուրի ընթերցում	
Աննա Ադամյան	<<Հայ կոմպոզիտորների պոլիֆոնիկ ստեղծագործություններ դաշնամուրի համար>> ուսումնական ձեռնարկ	64 էջ
Վլադեսլավ Եղիզարյան	Гуго Риман о фортепианной игре	стр.6
Սուրեն Շահումվարյան	«К юбилею Учителя» ԵՊԿ Երաժշտական Հայաստան	

ՈՐՈՇԵՑԻՆ - Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվության հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը, նշելով, որ գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտական կրթություն մասնագիտության առկա ուսուցման բակալավրիատի 2019-2020 ուս. տարվա 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անց է կացվել սեպտեմբերի 9-ից հոկտեմբերի 18-ը Երևանի Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 և Երևանի Խ.Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցներում: Կուրսը կիսվել է 2 խմբի՝ 14, 13 ուսանողներ: Պրակտիկայի մեթոդիստ-ղեկավարներ են նշանակվել՝ Ելենա Դադոյանը և Նաիրա Մարգարյանը: Կազմակերպվել է կոնֆերանս, ուսանողներին տրամադրվել են մեթոդական նյութեր, բացատրվել է մանկավարժական պրակտիկայի նպատակը, խնդիրները, ընթացքը և պահանջները: Կոնֆերանսը անց կացրեց պրակտիկայի ղեկավար՝ Շուշան Մաթևոսյանը, ներկա էին մեթոդիստներ՝ Ելենա Դադոյանը, Նաիրա Մարգարյանը և 4-րդ կուրսի ուսանողները:

Ամեն մի ուսանող 4-6 դաս է վարել, անց են կացվել բաց դասեր, երաժշտական դասամիջոցներ, որտեղ ուսանողները երգում էին և նվագում երաժշտական գործիքների վրա: Google Classroom-ի հարթակում դասից առաջ յուրաքանչյուր ուսանող նախապատրաստվում էր դասին կազմելով դասին համապատասխան պլան, որը ստուգվում էր մեթոդիստի կողմից: Քննարկում էին անցկացրած դասերը :

Կազմակերպվել են դասախոսներ դասախոսների և դպրոցի տնօրինության կողմից, վերահսկողություն է կատարվել ըստ ներկայացված գրաֆիկի: Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողները ակտիվորեն մասնակցել են դպրոցում կազմակերպված բոլոր միջոցառումներին, երգչախմբի հետ են պարապել, պատրաստվել են փառատոնին: ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցում ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվեց միջոցառում նվիրված Երևանի տոնին, որտեղ ուսանողները և աշակերտները միասին կազմակերպեցին գեղարվեստական հանդես, նվիրված Երևանի տոնակատարությանը: Խ.Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում կայացավ ամփոփիչ միջոցառումը՝ <<Երգում են պոետները>> խորագրով, որտեղ ընդգրկվել էին V-րդ և VI-րդ դասարանի աշակերտները: Ուսանողները

կատարեցին երգեր, գրված հայտնի պոետների՝ Համո Սահյանի, Վահան Տերյանի, Կոմիտաս-բանաստեղծի, Հովհաննես Թումանյանի, Եղիշե Չարենցի, Ռուբեն Հախվերդյանի բանաստեղծությունների հիման վրա, իսկ աշակերտները արտասանեցին և պարեցին ուսանողների նվագակցությամբ:

Դպրոցների տնօրենները, փոխտնօրենները, ուսուցչական կազմը գովեստի խոսքեր հայտնեցին ուսանողներին և մեթոդիստներին կատարված աշխատանքի համար և սպասում են մեր հաջորդ խմբերին:

Պրակտիկայի ավարտին կազմակերպվեց ամփոփիչ կոնֆերանս, որ տեղ մեր ուսանողները պատմեցին իրենց անց կացված պրակտիկայի մասին, ամեն մի խումբ ցացադրեց նկարներ, տեսանյութեր, ճշտագրովեց թղթապանակի պաշտպանության օրը:

ՈՐՈՇԵՑԻՆ - 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

**ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում կատարվող աշխատանքների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչը ներկայացրեց նաև հոկտեմբեր ամսվա մշտադիտարկման արդյունքները, որոնք իրականացվել են ըստ ստորև ներկայացված ցուցիչների.

<b>Կիսամյակի ուսումնական II-րդ ամիս</b>		
2.1	Համապատասխան ուսանողների առկայություն յուրաքանչյուր դասընթացում	10%
2.2	I միջանկյալ ստուգման հարցաշարի առկայություն	10%
2.3	5-8 ուսումնական շաբաթների ուսումնական նյութի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման	40%
2.4	Շաբաթական ակտիվություն, շաբաթական մեկ անգամ /տեսական դասընթացներ/յուրաքանչյուր դասընթացում ստորև նշված կետերից որևէ մեկի առկայությունը /անհատական դասերի դեպքում ամիսը 1 անգամ. 4. Յուրաքանչյուր դասին /անհրաժեշտ ուսումնական / թեմատիկ նյութի տեղադրում, կամ 5. Լրացուցիչ ուսումնական էլ. նյութեր/Sites, Video, Links և այլն/ կամ 6. Գնահատվող էլեկտրոնային հանձնարարություններ /տես. 4.3 կետ/	40%

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից պատշաճ ձևով իրականացվել է կիսամյակի 2-րդ ամսվա բոլոր պահանջները:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ՝ Աննա Հարությունյանը ներկայացրեց դեկտեմբեր ամսվա հեռակա ուսուցման 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների կողմից էլեկտրոնային հարթակում կատարվող առաջադրանքները:

1. Դեկտեմբերի 2-ին էլեկտրոնային հարթակում դասախոսների կողմից պետք է տեղադրվի <<ընթացիկ ստուգում>> մինչև դեկտեմբերի 6-ը ժամկետով:
2. Դեկտեմբերի 23-ին էլեկտրոնային հարթակում դասախոսների կողմից պետք է տեղադրվի <<միջանկյալ ստուգում>> մինչև դեկտեմբերի 29-ը ժամկետով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդներ Մերի Բաղդասարյանի և Գայանե Հարությունյանի ատեստավորման հարցը:

Հայցորդ Մերի Բաղդասարյանը ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները.

- Տպագրության է հանձնել մեկ հոդված՝ «Երաժշտությունը որպես դեռահասների հուզագագամունքային միջավայր ստեղծելու արդյունավետ գործոն», որը լույս կտեսնի 2020թ.-ին:
- Փորձարարական ծրագրին համապատասխան էջմիածնի թիվ 3 դպրոցում կատարում է գիտափորձարարական աշխատանքներ:
- Գրվել է ատենախոսության 2-րդ գլխի չորս ենթամասերը 33 էջի սահմաններում:
- 2019թ.ին հանձնել է փիլիսոփայություն առարկայի մինիմում քննությունը:
- Պատրաստվում է 2020թ.-ին կայանալիք անգլերենի մինիմում քննությանը:

Հայցորդ Գայանե Հարությունյանը ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները.

- 2019.-ին հանձնել է փիլիսոփայություն, անգլերեն և ՏՀՏ առարկաներից մինիմում քննությունները:
- Հրատարակության է հանձնել 2 հոդված՝ 1.Ազգային երաժշտության դերը հայ երեխայի կյանքում, 2. Հայ երաժշտամանկավարժական մտքի պատմությունից:
- Գրել է ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները և հանձնել ղեկավարին (1-ին գլուխ՝ 55 էջ, 2-րդ գլուխ՝ 67 էջ) և աշխատում է 3-րդ գլխի վրա (շարադրում է մանկավարժական գիտափորձը):
- Գիտափորձարարական աշխատանքները շարունակում է Լիբանանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Յու.Յուզբաշյանը, մ.գ.թ., դոցենտ Գ.Մելիքսեթյանը, ա.գ.թ., դոցենտ Ա.Հարությունյանը նշեցին, որ հայցորդներ Մերի Բաղդասարյանի և Գայանե Հարությունյանի կատարած աշխատանքները համապատասխանում են ատեստավորման պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել հայցորդներ Մերի Բաղդասարյանին և Գայանե Հարությունյանին:

Նիստի նախագահ՝  
Քարտուղար՝

Ս.Էլբակյան  
Ա.Կարապետյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2019թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական կազմը:

- ՕՐԱԿԱՐԳ –
